ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ
Վ1Պ-ՄԱԾՁԲ-20/13

Ք.Վանաձոր

«01» «06» 2020թ.

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Օհանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <Վ.Ն.Մ Սերվ.> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Գրիգորյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն):

1.2 Ծառայությունը մատուցվում սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակա?գում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից __2___ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության --2--օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից __10___օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 500 000 հինգ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են :

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ՝ տույժերի հաշվարկը իրականացվում է օրացույցային օրերով՝պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.20:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է __8__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N3 եւ 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 , <Արդշինինվեստբանկ >Վանաձոր մ/ղ	ք. Վանաձոր, Է. Դեմիրճյան 1բ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 11500027156100 ՀՎՀՀ 06940308 էլ. հասցեն՝ vnsserv@mail.ru Հեռ. (093) 760676
Հ/հ 247170009663 ՀՎՀՀ 06907013 Տնօրեն՝ Վ.Օհանյան Կ.Տ ստորագրություն	(ստորագրություն Ս. Գրիգորյան Կ.Տ.

Հավելված N 1
« 01 » 06 20 թ. կնքված
ՎՊ-ՄԱԾՁԲ-20/13ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Առավելագույն գումարը	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111130	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ /Ցանկը ներկայացված է Հավելված 1.1-ով/	դրամ	500000	1	Ք.Վանաձոր	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25 դեկտեմբերի 2020թ

Հավելված N 1,1

ՀՀ	CPV	ԱՆՎԱՆՈՒՄ	ԳԻՆԸ
1	09211130	ՅՈՒՂ ԿԻՍԱՍԻՆԹԵԹԻԿ SHELL 10W40 /փոխարինում/	500
2	09211100	ՅՈՒՂ /փոխարինում/	500
3	34321121	ՅՈՒՂԻ ՖԻԼՏՐ/փոխարինում/	500
4	34331300	ՕԴԻ ՖԻԼՏՐ/փոխարինում/	500
5	34331300	ՕԴԻ ՖԻԼՏՐ/փոխարինում/	500
6	34331300	ԲԵՆԶԻՆԻ ՖԻԼՏՐ/փոխարինում/	500
7	34321170	ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԿԱԼՈՏԿԱ ԱՌՋԵՎԻ/փոխարինում/	2500
8	34321180	ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԿԱԼՈՏԿԱ ՀԵՏԵՎԻ/փոխարինում/	2500
9	31421100	մարտկոց/փոխարինում/	2000
10	34331300	ԶԳԱՆ /ՏՅԱԳԱ//փոխարինում/	6000
11	34331300	ՇԱՌԱՎՈՅ/փոխարինում/	3000
12	34331300	ԽԱՉՈՒԿ/փոխարինում/	2000
13	34331300	ՄԵՂՄԱՑՈՒՑԻՉ /ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐ//փոխարինում/	4000
14	34331300	ՌԱԶՎԱԼԻ ՏՈՒԼԿԻ/փոխարինում/	1800
15	34331300	ՍՏԱԲԼԻԶԱՏՈՐԻ ՌԵԶԻՆ/փոխարինում/	1800

16	34331300	ԹԵՎԵՐ/ԿՈՒԼՈ/ ԱՌՁԵՎԻ ԱՁ ԵՎ ԶԱԽ/փոխարինում/	4500
17	34331300	ՇՏԱՆԳԻ ՌԵԶԻՆ/փոխարինում/	1800
18	34321200	ԽԼԱՑՈՒՑԻՉ /ԳԼՈՒՇԻՏԵԼ//փոխարինում/	3000
19	34311170	ՌԱԴԻԱՏՈՐ 21070 /ԻՆԺԵԿՏՈՐ//փոխարինում/	4000
20	34311170	ՌԱԴԻԱՏՈՐ 2107 /փոխարինում/	4000
21	09211900	ԱՆՏԻՖՐԻԶ/փոխարինում/	1200
22	09211650	ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ՀԵՂՈՒԿ/փոխարինում/	2000
23	34331300	ՊԱԴՆՈԺԿԱ ԱՁ ԶԱԽ/փոխարինում/	6000
24	34331300	ԳԵՆԵՐԱՏՈՐ /փոխարինում/	4000
25	34331300	ՍՏԱՐՏԵՐ/փոխարինում/	4000
26	34331300	ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԽՈՂՈՎԱԿ	1800
27	34311160	ԿԱՅԵԱՄՈՄ /ՍՎԵՉԱ//փոխարինում/	300
28	09211150	Լիտոլ-24/փոխարինում/	500
29	09211160	Սոլիդոլ/փոխարինում/	0
30	09211400	Փոխանցման տուփի յուղեր/փոխարինում/	2800
31	09211630	Հակակոռոզիոն յուղեր/փոխարինում/	5000
32	31611500	Թարթիչներ/փոխարինում/	1200
33	34311190	Միջադիրներ/փոխարինում/	3000
34	34311200	Ռետինե փոխակրիչների գոտիներ/փոխարինում/	2500
35	34321100	Սռնիներ/փոխարինում/	4500
36	34331300	ՁՐԻ ՊՈՄՊ/փոխարինում/	5500
37	34331300	Ջերմափոխադրիչի կափարիչ/փոխարինում/	2500
38	34331300	Թերմոստատ/փոխարինում/	1500
39	34331300	Վառոցքի փական/փոխարինում/	3000
40	34331300	Արգելակման գլխավոր մխոց/փոխարինում/	5500
41	34331300	Թափանիվ/փոխարինում/	12000

<u>Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայանից պահանջվող տեխնիկական պահանջներ</u>

1. Ծառայություն մատուցող կազմակերպությունը /Կազմակերպություն/ պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝

1.1 սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն,

1.2 վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը /ընթացամասի, շարժիչի, էլեկտրականության, յուղման, անիվների բացվածքի կարգավորման, վուլկանացման, իժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, ինչպես նաև մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ/,

<u>2. Կազմակերպությունը՝</u>

2.1 Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, դրանց ժամկետների հաստատված տեղեկանք, ՝

2.2 Ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո առնվազն մեկ ժամվա ընթացքում սկսում է ավտոմեքենայի վերանորոգման գործընթացը /ծառայությունների մատուցումը/, ընդ որում վերանորոգման աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվում 2.1 կետում նշված տեղեկանքով հաստատված ժամանակահատվածը:

2.3 Փոխարինված ավտոպահեստամասերը պահանջի դեպքում պետք է վերադարձվի Պատվիրատուի ներկայացուցչին:
2.4 Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան:
2.5 Պետք է տրամադրի ցանկում նշված նորոգված մասերի կամ փոփոխված դետալների երաշխիքային ժամկետ /այն տողերի մասով որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել պետք է ներկայացվի համապատասխան հիմնավորում/:

<u>Երաշխիքներ</u>
Կատարված աշխատանքների համար - 3 ամիս
Պահեստամասերի համար - 6 ամիս
Ռետինե դետալների համար - 3 ամիս
Բոլոր պահեստամասերը պետք է լինեն գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:
*Ծառայությունը պետք է մատուցվի Վանաձոր քաղաքում

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 , <Արդշինինվեստբանկ >Վանաձոր մ/ղ	ք. Վանաձոր, Է. Դեմիրճյան 1բ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 11500027156100 ՀՎՀՀ 06940308 էլ. հասցեն՝ vnsserv@mail.ru Հեռ. (093) 760676
Հ/հ 247170009663 ՀՎՀՀ 06907013 Տնօրեն՝ Վ.Օհանյան	(ստորագրություն Ս. Գրիգորյան
Կ.Տ ստորագրություն	Կ.Տ.

Հավելված N 2
« 01 » 06 20 թ. կնքված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ	%	%	%	%	%	50	100	150	200	250	300	500	500

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 ,
<Արդշինինվեստբանկ >Վանաձոր մ/ղ

Հ/հ 247170009663
ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Վ.Օհանյան

Կ.Տ
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

ք. Վանաձոր, Է. Դեմիրճյան 1բ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500027156100
ՀՎՀՀ 06940308
Էլ. հասցեն՝ vnsserv@mail.ru
Հեռ. (093) 760676

(ստորագրություն)
Ս.Գրիգորյան
Կ.Տ.